ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«04» ապրիլի 2026թ. N 183-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 23-ի թիվ 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2/4/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

23 հունվարի 2026թ. ք. Երևան

2026 թվականի հունվարի 23-ին ժամը 12:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ.Գասպարյանը
Ա. Հակոբյանը

«Լիգա» ՍՊԸ-ից՝ Գ. Գրիգորյանը, «ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊԸ-ից՝ Մ. Մանուկյանը, Գ. Մանուկյանը և Ա. Հակոբյանը:

Օրակարգում՝

Արարատի մարզի միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի հունվարի 29-ին կայանալիք մրցույթի մասնակցության համար ներկայացված փաթեթների բացումը:

Քննարկվեց՝

Արարատի մարզի միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ

իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի հունվարի 29-ին կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերի համապատասխանության հարցը ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Արձանագրվեց՝

1. Արարատի մարզի միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի հունվարի 29-ին կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացվել է երկու հայտ՝ «Լիգա» ՍՊ ընկերությունը և «ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊ ընկերությունը:

2. «Լիգա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա է հետևյալ թերությունները՝

2.1. չի ապահովվել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) Ձև 1-ով հաստատված ցանկի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի մրցույթին մասնակցելու համար ընկերությունները պետք է ներկայացնեն նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

2.2 հայտ-պարտավորությամբ ներկայացված միկրոավտոբուսների ընդհանուր քանակը չի բավարարում մրցույթով նախատեսված միկրոավտոբուսների ընդհանուր քանակին:

3. «ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա է հետևյալ թերությունները,

3.1 համաձայն Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 018/2011, Հավելված 2, Աղյուսակի 39-րդ կետի, 2019 թվականից հետո ԵԱՏՄ տարածքում շրջանառության մեջ դրվող M3 դասի գազային շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն էկոլոգիական 5-րդ դասի պահանջին: Մրցութային փաթեթով ներկայացված ՊԱԶ-32054 մակնիշի ավտոբուսների վերաբերյալ՝ համաձայան «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ կնքված No 120126 առուվաճառքի պայմանագրի, էկոլոգիական դասի վերաբերյալ տեղեկություն նշված չէ: Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ տեղեկատվությունը:

3.2 համաձայն ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) Ձև 12-ով սահմանված պահանջի (*Ավտոբուսներ արտադրող գործարանի կամ իր պաշտոնական ներկայացուցչի տրամադրած՝ ավտոբուսների մատակարարման ժամկետները, տեխնիկական բնութագրերը և գինը սահմանող փաստաթուղթ*)՝ անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն «Կարկոմավտո» ՍՊԸ-ն հանդիսանում է պաշտոնական ներկայացուցիչ թե ոչ:

4. Հաշվի առնելով, որ 2026 թվականի հունվարի 27-ը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հայտարարվել է ոչ աշխատանքային օր, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի պահանջով, ըստ որի եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Թերությունների վերացման վերջնաժամկետը տեղափոխել և սահմանել 2026 թվականի հունվարի 29-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի պահանջները՝

<u>Որոշվեց</u>՝

«Լիգա» ՍՊ և ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊ ընկերություններին տրամադրել ժամանակ մինչև 2026 թվականի հունվարի 29-ը ժամը 12:00-ն՝ վերոնշյալ թերությունները վերացնելու համար:

Մրցութային հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Ա. Հակոբյան